ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ
ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ԱՋԴԱՐԱՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Չեխիայի Արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ՝ Չեխիայի Հանրապետությունում Թրանսփարենսի Ինթերնեշնլի գրասենյակի հետ համատեղ իրականացվող ծրագրի միջոցով:

Հրապարակման բովանդակության համար պատասխանատու է Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության տեսակետները:

ԱԶԴԱՐԱՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Փորձագետ՝ Խաչիկ Հարությունյան

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Երևան 0002, Մ.Սարյան 12, 5-րդ հարկ
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (374 10) 569519 Էլ. փոստ՝ info@transparency.am
Կայքէջ՝ www.transparency.am

ԵՐԵՎԱՆ 2019

ԱԶԴԱՐԱՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Նախաբան 3

Գլուխ 1. Ներածություն 5

Գլուխ 2. Ազդարարման պաշտպանության վերաբերյալ Հայաստանի օրենսդրությունը 7

Ո՞վ է հանդիսանում ազդարար 7

Ազդարարման եղանակները 8

Ներքին ազդարարում 8

Արտաքին ազդարարում 9

Անանուն ազդարարում 11

Ազդարարման վարույթը 12

Գլուխ 3. Ազդարարների իրավունքները և պարտականությունները 18

Ազդարարների իրավունքները 18

Փոխկապակցված անձանց իրավունքները 22

Ազդարարի պարտականությունները 23

Փոխկապակցված անձանց պարտականությունները 23

Գլուխ 4. Ի՞նչպես պաշտպանել սեփական և փոխկապակցված անձանց իրավունքները 25

Խտրականություն 25

Գույքային վնաս կամ դրա սպառնալիք 27

Սպանություն/առողջությանը վնաս պատճառելը կամ սպառնալիքը 27

Գլուխ 5. Լրատվամիջոցների դերը և ազդարարումը 30

..... **Error! Bookmark not defined.**

Գլուխ 6. Ազդարարման շրջանակը և մասնավոր հատվածը 32

Հավելված 1. Հայտնի ազդարարներ 33

Էդմունդ Դին Մորել և Սըր Ռոջեր Դեյվիդ Քեյսմենթ 33

Մարկ Ֆելտ 34

Ֆրանկ Սեպրիչո 35

Ջուլիան Ասանժ 35

Էդվարդ Սնոուդեն 37

Աննա Գարրիդո Ռամոս 38

Հավելված 2. Ձևաթղթեր 39

Տեսնել անարդարությունը և լռել նշանակում է ինքդ մասնակցել դրան:
Ժան-Ժակ Ռուսո

Եթե չկա պայքար ինչ-որ բանի հասնելու համար, ապա այդ ինչ-որ բանը երբեք հասանելի չի լինի:
Չկան անհնարին նպատակներ, այլ կան մարդիկ, ովքեր չեն պայքարում դրանց հասնելու համար:
Աննա Գարիդո Մարկես, Իսպանիա
Թրանսփարենսի Ինթերնեշնլի 2018թ. հակակոռուպցիոն մրցանակի դափնեկիր

Նախաբան

Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը ենթադրում է ոչ միայն այդ արատավոր երևույթի կանխարգելմանն ուղղված քաղաքականության մշակում և իրականացում, կոռուպցիոն հանցագործություններում ներգրավված անձանց բացահայտում և դատապարտում, այլև՝ այդ գործընթացներին քաղաքացիների մասնակցություն և աջակցություն, որն առնվազն պետք է դրսևորվի ապօրինությունների նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքով և դրանց վերհանմանն ուղղված կոնկրետ քայլերով:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունեց «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը 2017թ. հունիսի 9-ին, այսինքն այն ժամանակ, երբ ազդարարման հավանականությունը շատ փոքր էր, կասկածի տակ էր համապատասխան կառույցների պատշաճ արձագանքումը ազդարարների հաղորդումներին և, ի վերջո, կար վտանգ, որ ազդարարումը կարող էր գործադրվել իրենց իսկ դեմ: Սրա ապացույցն են Թրանսփարենսի Ինթերնեշնլ կազմակերպության Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի 2016թ. տվյալները, որոնք արձանագրել են ծայրահեղ անբարենպաստ տվյալներ Հայաստանի համար՝ տարածաշրջանի 42 երկրների ընդհանուր համատեքստում: Այսպես, Հայաստանի քաղաքացիների 52 տոկոսը չէր ցանկանում ներգրավվել կոռուպցիայի դեմ պայքարում, 63 տոկոսը կարծում էր, որ շարքային քաղաքացու ներգրավումը ոչինչ չի փոխի, 67 տոկոսը ցանկություն չուներ բարձրաձայնելու կոռուպցիոն դեպքերի մասին, որի հիմնական պատճառը վախն էր հնարավոր հետևանքներից (41 տոկոս), իսկ 68 տոկոսը գտնում էր, որ բարձրաձայնելուց ոչինչ չի փոխվի:

2018թ. գարնանը Հայաստանում տեղի ունեցած համաժողովրդական թավշյա հեղափոխությունը ցույց տվեց, որ քաղաքացիների մեծամասնությունը պատրաստ են լինել արդարության պաշտպաններ և մարտիկներ: Հեղափոխությունը նաև իր հետ բերեց բարձր ակնկալիքներ երկրի նոր ղեկավարությունից և այլևս ակնհայտ է, որ քաղաքացին իրեն զգում է, որպես պահանջատեր պետական կառույցների և պաշտոնյաների նկատմամբ: Հայաստանում տիրող նոր իրավիճակում «Ազդարարման համակարգի մասին» օրենքը ստանձնում է բացառիկ առաքելություն և դերակատարում՝ խթանելու քաղաքացիների ներգրավումը արդարության հաստատման գործում և ձևավորելու անհանդուրժողականություն կոռուպցիայի նկատմամբ:

Ազդարարի ուղեցույցի նպատակն է հնարավորինս պարզ ներկայացնել ազդարարմանն առնչվող խրթին օրենսդրությունն այն անձանց, որոնք տեսնում են ապօրինություններ և ցանկանում են վեր հանել դրանք: Ուղեցույցին կից նաև մշակվել են մի շարք ձևաթղթեր՝ աջակցելու ազդարարներին և նրանց հետ փոխկապակցված անձանց՝ գործելու գրագետ այնպիսի իրավիճակներում, որոնց պոտենցիալ ազդարարը կարող է առերեսվել իրական կյանքում:

Նոր Հայաստանում քաղաքացին վերադարձել է իր սահմանադրական դերին և դարձել իշխանության աղբյուրը: Լիահույս ենք, որ այս իրավիճակում սույն ուղեցույցը լավագույնս

կնպաստի կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը, ապօրինությունների կանխարգելմանը և արդարության հաստատմանը:

Գլուխ 1. Ներածություն

Ազդարարման կոնցեպտի համար օգտագործվող անգլերեն տերմինը «whistleblowing»-ն է, ինչը բառացի նշանակում է «սուլիչը փչել»: Այսինքն, դրա միտքն այն է, որ երբ օրինավոր քաղաքացին դառնում է որևէ ապօրինության ականատես՝ նա փչում է սուլիչը, որպեսզի իրավասու կառույցների ուշադրությունը հրավիրի այդ հանգամանքի վրա:

Ընդունված է համարել, որ ազդարարման կոնցեպտի զարգացման հարցում առաջնային դերակատարում ունեցել են անգլոսաքսոնական իրավունքի երկրները: ԱՄՆ-ում առաջին իրավական ակտը, որով պաշտպանության տակ են վերցվել ազդարարներն, ընդունվել է դեռևս 1863թ.-ին և կոչվում է «Կեղծ պահանջների ակտ» (False Claims Act), որի ընդունման նպատակը հանդիսանում էր ԱՄՆ քաղաքացիական պատերազմի ընթացքում կանխել մատակարարների կողմից կեղծիքները[1]:

Ազդարարման հայտնի օրինակներից է «Ուոթերգեյթի» սկանդալի ծավալումը 1970-ականների ԱՄՆ-ում, որի արդյունքում կանխվեց նախագահ Նիքսոնի կողմից պետական համակարգի օգտագործումն ընդդեմ ընդդիմադիր քաղաքական գործիչների ու լրագրողների և նա հրաժարական տվեց[2]: Մեկ այլ օրինակ է «Վիքիլիքս» ինտերնետային կայքը, որի միջոցով հրապարակվեցին մի շարք արտահոսված տեղեկություններ տարբեր երկրներում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների մասին: Ազդարարման օրինակները բազմաթիվ են և դրանք վերաբերում են ստրկական շահագործման միջոցով արժանապատվությունը ոտնահարելուն, մարդկանց մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի խախտումներին, առողջությանը սպառնացող վտանգները քողարկելուն, անձանց հոգեկան խոշտանգումներ հասցնելուն, նացիստական կառավարության կողմից գաղտնի սպանություններին և այլն: Հայտնի մի շարք ազդարարների մասին տեղեկություններ ներկայացված են **Հավելված 1**-ում:

Ազդարարումը և ազդարարների պաշտպանությունը քաղաքակիրթ հասարակություններում հանդիսանում են հակակոռուպցիոն պայքարի կարևորագույն բաղադրիչներ, սակայն միջազգային իրավունքի մակարդակում առկա չէ որևէ իրավապարտադիր իրավական ակտ, որում տեղ գտած լիներ «ազդարարում» եզրույթը: Միաժամանակ, պետք է նշել, որ բովանդակային առումով ազդարարմանն անդրադարձ է կատարված ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի հոդված 33-ում: Վերջինով սահմանվում է՝ *«Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի իր ներքին իրավական համակարգի մեջ բոլոր անձանց որևէ անարդարացի վերաբերմունքից պաշտպանության ապահովման համար պատշաճ միջոցներ ներառելու հնարավորությունը, ովքեր բարեխղճորեն և խելամիտ հիմքերով իրավասու մարմիններին հայտնում են այն իրավախախտումների հետ կապված փաստերի մասին, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան»*[3]:

Միջազգային մակարդակում ազդարարման կոնցեպտի բովանդակային սահմանումը, ոչ իրավապարտադիր ձևով, տրվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլ կազմակերպության «Ազդարարների պաշտպանությանը վերաբերող օրենսդրության միջազգային

[1] https://www.phillipsandcohen.com/false-claims-act-history/
[2] https://www.history.com/topics/1970s/watergate
[3] ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, հոդված 33

սկզբունքները» հրապարակման մեջ: Համաձայն դրա՝ *«Ազդարարումը հանրային կամ մասնավոր հատվածի կազմակերպություններում կամ դրանց կողմից կատարված կոռուպցիոն, ապօրինի, խարդախ կամ վտանգավոր՝ հանրային շահին սպառնացող կամ դրա մտահոգության առարկա հանդիսացող գործողությունների[4] մասին տեղեկատվության բացահայտումն է այն անհատներին կամ կազմակերպություններին, որոնք համարվում են իրավասու՝ ձեռնարկելու միջոցներ այդ առնչությամբ»[5]:*

Ազդարարումը կարևոր է ժողովրդավարական կարգերի հանդեպ տեղի գտնող ոտնձգությունների կամ սպառնալիքների դեմ պայքարի տեսակետից: Այն անհրաժեշտ է կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի համար ոչ միայն այն պատճառով, որ բացահայտում է հանրային և մասնավոր հատվածում հանցագործ դրսևորումները և ներգրավում քաղաքացիներին կոռուպցիայի դեմ պայքարում, այլև այն առումով, որ նվազեցնում է կոռուպցիոն ռիսկերը, քանի որ հանցագործություն ծրագրող անձինք զգուշանում են և ստիպված են ավելի խրթին մեխանիզմներ մտածել իրենց կոռուպցիոն գործարքների համար:

Պետք է նկատել, որ երբ պետությունը ազդարարման համար ընդունում է հատուկ օրենսդրություն, դրանով ցույց է տալիս, որ կարևորում է ազդարարումը և ազդարարներին վերցնում է հատուկ պաշտպանության տակ: Կարևոր է, որ քաղաքացիները վստահ լինեն, որ անօրինականությունների դեմ ձեռնարկված գործողությունների մասին ահազանգելուց հետո իրենց և իրենց ընտանիքի անդամների անվտանգությունը բոլոր մակարդակներում երաշխավորված կլինի պետության կողմից:

[4] Ներառյալ թվացյալ կամ պոտենցիալ իրավախախտումները
[5] International Principles for Whistleblower Legislation, էջ 4: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://knowledgehub.transparency.org/product/international-principles-for-whistleblower-legislation

Գլուխ 2. Ազդարարման պաշտպանության վերաբերյալ Հայաստանի օրենսդրությունը

Ո՞վ է հանդիսանում ազդարար

Հայաստանի Հանրապետությունում ազդարարումը սահմանվում է և ազդարարների իրավունքները պաշտպանվում են «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2017թ.-ի հունիսի 9-ին: Հայաստանում ազդարարների իրավական ռեժիմի կարգավորման անհրաժեշտությունն առաջին անգամ ամրագրվել է «Հանրային կառավարման համակարգի հակակոռուպցիոն ռազմավարության» հայեցակարգում, որն ընդունվել էր 2014թ.-ի ապրիլի 10-ին: Ազդարարման կարգավորման պահանջը նաև դարձել է Հայաստան-ԵՄ երկխոսության ընթացքում ՀՀ բյուջեին տրամադրվող օգնության նախապայմաններից մեկը:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով տրվում է ազդարարի սահմանումը.

«Ազդարար՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը սույն օրենքով նախատեսված կարգով բարեխղճորեն հաղորդում է տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ՝ կապված այն պաշտոնատար անձի կամ մարմնի հետ, որի հետ նա գտնվում կամ գտնվել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական հարաբերությունների մեջ, կամ որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով, կամ որը սխալմամբ ընկալվել է որպես ազդարար: Անձը համարվում է սխալմամբ ընկալվող ազդարար, եթե նա չազդարարելով ընկալվել է որպես ազդարար այլ անձանց կողմից, կամ որի հանդեպ կիրառվել են վնասակար գործողություններ»[6]:

Այս սահմանումն ավելի պարզ և հասկանալի ձևով ներկայացնելու համար, այն կարելի է մասնատել ի քանի տարրերի: Այսպես՝

1. Ազդարարը ֆիզիկական կամ իրավաբանական անձ է:
2. Նա տեղեկություններ է հաղորդում հետևյալ հանգամանքներից որևէ մեկի վերաբերյալ
   - կոռուպցիոն բնույթի դեպք
   - շահերի բախում
   - էթիկայի կանոնների խախտում
   - անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտում
   - հայտարարագրման հետ կապված խախտում
   - հանրային շահերին ուղղված այլ վնաս կամ դրանց սպառնալիք:
3. Նա տեղեկությունները հաղորդում է բարեխղճորեն:
4. Նա տեղեկությունները հաղորդում է օրենքով նախատեսված կարգով, այսինքն՝ օգտագործում է կամ ներքին ազդարարման, կամ արտաքին ազդարարման և կամ անանուն ազդարարման եղանակները:

[6] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1, ենթակետ 2

5. Որևէ պաշտոնատար անձի կամ մարմնի վերաբերյալ հաղորդում տալը ենթադրում է, որ նա դրա հետ գտնվել և կամ գտնվում է՝
   - աշխատանքային հարաբերությունների մեջ
   - քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ
   - վարչաիրավական հարաբերությունների մեջ
   - կամ ժամանակին դիմել է այդ պետական մարմնին կամ պաշտոնատար անձին ծառայություններ մատուցելու նպատակով:
6. Կառույցը կամ պաշտոնատար անձը, որի մասին ազդարարը տեղեկացնում է, պետք է լինի՝
   - պետական մարմին
   - տեղական ինքնակառավարման մարմին
   - պետական հիմնարկ (օրինակ՝ Ծրագրերի իրականացման գրասենյակ-ԾԻԳ[7])
   - պետական կազմակերպություն (օրինակ՝ ՊՈԱԿ[8])
   - հանրային նշանակության կազմակերպություն: Վերջինս «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն սահմանված է որպես *«ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ»*[9]:

Ազդարարի առանձին տեսակ կարելի է համարել սխալմամբ ընկալվող ազդարարին, որն այլոց կողմից սխալմամբ ընկալվում է որպես ազդարար, սակայն իրականում այդպիսին չէ: Նման անձինք ևս համարվում են ազդարարներ, և օրենքը նրանց տալիս է բոլոր այն իրավունքները, որոնք վերաբերելի են իրական ազդարարներին:

Ազդարարման եղանակները

Համաձայն «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի, առկա է ազդարարման 3 տեսակ՝ ներքին, արտաքին և անանուն:

Ներքին ազդարարում

«Ներքին ազդարարում է համարվում հաղորդումը ներկայացնելն իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին»[10]:

Այսինքն, ազդարարը պետք է ներկայացնի հաղորդումը հետևյալ 4 սուբյեկտներից որևէ մեկին՝

1. իր անմիջական ղեկավարին
2. իր անմիջական ղեկավարի վերադասին
3. իր անմիջական ղեկավարի նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի

[7] ՀՀ կառավարության համար 765 որոշմամբ (27.12.1999թ.) հաստատված կանոնակարգի 3-րդ կետը, ըստ որի «ԾԻԳ-ը ստեղծվում է որպես Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետև՝ հիմնադիր), իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական հիմնարկ՝ հիմնադիր որոշմամբ»:
[8] «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 1
[9] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 3
[10] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 4, մաս 2

4. իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին:

Իրավասու մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինը, պետական հիմնարկը, պետական կազմակերպությունը և հանրային նշանակության կազմակերպությունը կամ անձը, ում իրավասու մարմնի ղեկավարը լիազորել է զբաղվել ազդարարման հարցերով[11]:

Ներքին ազդարարման օրինակ

Քաղաքացի Գևորգ Գևորգյանը հանդիսանում է քաղաքացիական ծառայող ՀՀ առողջապահության նախարարության «Դեղորայքային քաղաքականության բաժնում»: Նա տիրապետում է տեղեկատվության, որ Հայաստանում գործող դեղատների ցանցերից մեկի տնօրենը իր բաժնի պետի եղբայրն է:
Դեղորայքային քաղաքականության բաժինը պատրաստում է Հայաստանում մալարիայի դեմ պայքարի հայեցակարգ, որի ներքո բաժնի պետը առաջարկում է, որպեսզի մալարիայի դեմ գնվի միայն չեխական դեղորայք, քանի որ այն, իբրև թե, ամենից արդյունավետն է: Իրականում նրա եղբայրը տվյալ դեղորայքի հայաստանյան միակ ներկրողն է, քանի որ հանդիսանում է չեխական «Զդռավկո-զդռավ» դեղորայքի վաճառքի միակ պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում:
Գ.Գևորգյանն իր բաժնի պետի առանձնասենյակ մտնելիս պատահաբար լսում է, թե ինչպես է բաժնի պետը հեռախոսով եղբորը խոստանում անել ամեն ինչ, որպեսզի նա դառնա ՀՀ առողջապահության նախարարության մատակարարը:

Գ.Գևորգյանը որպես օրինավոր քաղաքացիական ծառայող և ազնիվ քաղաքացի չի կարող հանդուրժել իր բաժնի պետի նման վարքը և պատրաստվում է այդ մասին ազդարարել: Քանի որ ազդարարումը վերաբերում է իր անմիջական ղեկավարին, ապա բացարձակ անհեռանկար է ազդարարել հենց նրան՝ իր անմիջական ղեկավարին: Գևորգյանը որոշում է ազդարարել «Դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության» պետին, ով հանդիսանում է Գևորգյանի ղեկավարի անմիջական վերադասը:

Արտաքին ազդարարում

Արտաքին ազդարարում է համարվում իրավասու մարմնին հաղորդում ներկայացնելը[12]: Արտաքին ազդարարման տարբերությունը ներքին ազդարարումից կայանում է նրանում, որ եթե ներքինի դեպքում ենթադրվում է, որ ազդարարողը աշխատում է որևէ կառույցում, ապա արտաքինի դեպքում ենթադրվում է, որ նա որևէ ձևով առնչվել է որևէ կառույցի: Եվս մեկ տարբերությունն այն է, որ արտաքին ազդարարումը, որպես կանոն, վերաբերում է այն դեպքերին, երբ ազդարարվող տեղեկատվության մեջ նշվող անձը վերադաս է հանդիսանում, և նրա հանդեպ արդյունավետ վարույթ չի կարող իրականացվել և այդ իսկ պատճառով պետք է դիմել մեկ այլ մարմնի:

Բացի այդ, ներքին ազդարարման դեպքում ազդարարը, ըստ իր հայեցողության, կարող է հաղորդել տեղեկություններ վերոնշյալ չորս մարմիններից մեկին, մինչդեռ արտաքին

[11] Նույն տեղում հոդված 2, մաս 1, կետ 4
[12] Նույն տեղում, հոդված 4, մաս 3

ազդարարման դեպքում հստակ կարգավորվում է, թե ազդարարը որ դեպքում որ սուբյեկտին պետք է ներկայացնի հաղորդումը:

Այսպես, եթե հաղորդումը վերաբերում է իրավասու մարմնի աշխատակցին, ապա ազդարարումը կատարվում է իրավասու մարմնի ղեկավարին[13]: Եթե հաղորդումը վերաբերում է հենց իրավասու մարմնի ղեկավարին, ապա այն ներկայացվում է իրավասու մարմնի վերադաս մարմնի ղեկավարին: Եթե իրավասու մարմինը չունի վերադաս մարմին, ապա հաղորդումը ներկայացվում է համապատասխան մարմնի հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողով, իսկ բարձրաստիճան պաշտոնատար անձանց դեպքում՝ կոռուպցիայի կանխարգելման ոլորտում լիազոր մարմնին՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին[14]:

Վերոգրյալը սխեմատիկ ձևով ներկայացված է ստորև.

Սխեմա 1. Ազդարարման եղանակները և քայլերի հերթականությունը



[13] Նույն տեղում, հոդված 7, մաս 2

[14] Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը դեռևս չի ձևավորվել Հայաստանում: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց շրջանակը ենթադրաբար կընդլայնվի «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն:

Արտաքին ազդարարման օրինակներ

2018թ. -ի ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմում զբաղեցնելով տարբեր պաշտոններ՝ 2019թ. հունվարի 27-ին Անի Վերծյանը ազատվել է աշխատանքից և հետագա տարիների ընթացքում բազում անգամներ լսել, որ իր նախկին կոլեգաներից շատերը զանազան տեղեկանքների տրամադրումը կազմակերպելու համար կաշառք են ստացել:2018թ. սեպտեմբերի 25-ին Անի Վերծյանը պատահմամբ լսում է իր երկու նախկին գործընկերուհիների խոսակցությունը: Բացի այդ, նախկին գործընկերուհիներից մեկը, Անիի ծննդյան արարողությանը մասնակցելիս, նրա տանը մոռանում է աշխատանքային փաստաթղթեր, որոնցով հաստատվում է նախկին գործընկերուհիների խոսակցությունը: Որպես օրինավոր քաղաքացի Անի Վերծյանը հաղորդում է ներկայացնում ՀՀ առողջապահության նախարարին:

***

Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամներից մեկը լինելով Զարզանդ Նիկողոսյանը հստակ տեղեկություններ ունի, որ նույն հանձնաժողովի նախագահ Պողոս Միքայելյանը հանդիսանում է կահույքի արտադրության շուկայում գերիշխող դիրք զբաղեցող «Արմենիա-կոմֆորտ» արտադրամասի իրական սեփականատերը: «Արմենիա-կոմֆորտ» ՍՊԸ-ի մրցակիցներն անբարեխիղճ մրցակցության համար դիմում են ներկայացնում հանձնաժողովին:
Դիմումը վարույթ ընդունելուց հետո Միքայելյանը նիստերի ընթացքում անընդհատ առաջ է մղում այն գաղափարը, որ «Արմենիա-կոմֆորտը» իր գործունեությամբ չի խախտել բարեխիղճ մրցակության կանոնները, մինչդեռ փաստերը հակառակն են ապացուցում:
Տեսնելով, որ իր հանձնաժողովը չունի վերադաս, Նիկողոսյանը դիմում է կոռուպցիայի կանխարգելման ոլորտում լիազոր մարմնին:

«Արտաքին ազդարարում չի համարվում քրեական հետապնդման մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը»[15]*:*

Այսինքն, եթե անձը հանցագործության մասին հաղորդում է ներկայացնում իրավապահ մարմնին, ապա նա չի համարվում ազդարար, և ազդարարման հետ կապված իրավական կարգավորումները չեն տարածվում այդ անձի վրա:

Անանուն ազդարարում

Անանուն ազդարարումը կատարվում է միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով՝[16] միայն հանցագործությունների մասին հաղորդում ներկայացնելով[17]:

Անանուն հաղորդում ներկայացնելիս երաշխավորվում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը՝ ինչպես իրավասու մարմնին, այնպես էլ այլ անձանց, բացառությամբ՝ երբ

[15] Նույն տեղում, հոդված 7, մաս 6
[16] Այն պետք է ստեղծվի մինչև 2019թ. հունվարի 1-ը՝ համաձայն «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ի
[17] Նույն տեղում, հոդված 8, մաս 1

ազդարարը ինքն է բացահայտում իր անձնական տվյալները[18]: Դա պրակտիկայում կարող է դրսևորվել այն դեպքում, երբ ազդարարը ուղարկվող տեքստում անփութությամբ նշի իր անձնական տվյալները: Բացի այդ, իրավասու մարմինն իրավունք չունի միջոցներ ձեռնարկել անանուն հաղորդում ներկայացրած ազդարարի անձական տվյալները բացահայտելու ուղղությամբ[19]:

Ազդարարի անանունությունը երաշխավորվում է նրա համացանցային հաղորդակարգի հասցեն (Internet Protocol Address) ծածկագրելու միջոցով[20]: Միասնական էլեկտրոնային հարթակը վարում է կառավարության լիազոր մարմինը, այն է՝ ՀՀ արդարադատության նախարարությունը[21]: Հարթակն ապահովում է հասանելիություն Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության համար[22]: Վերջինս իր իրավասության շրջանակներում ապահովում է հարթակում մուտքագրված յուրաքանչյուր հաղորդման հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան իրավական ակտի ընդունումը[23]: Հարթակը նախատեսվում է ապահովել հետադարձ կապի միջոցով՝ ստեղծելով անանուն հաղորդմանն առնչվող անհրաժեշտ տեղեկությունների և փաստերի հավաքման հնարավորություն [24]:

Եթե անանուն հաղորդմամբ ներկայացվող տեղեկությունը բավարար չափով հիմնավորված է, վերաբերում է կոնկրետ պաշտոնատար անձի կամ մարմնի և պարունակում է տվյալներ, որոնք ողջամտորեն կարող են ստուգվել, և հանցագործության հատկանիշներ, ապա հաղորդումը ենթակա է ստուգման «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով[25], և ստուգման նպատակով դատախազությունը հաղորդումը վերահասցեագրում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին:

Էլեկտրոնային հարթակի միջոցով հաղորդում ներկայացնելիս
Ձեր անանունությունը երաշխավորվում է:
Ուշադիր եղե՛ք, որ հաղորդման մեջ պատահաբար չնշեք Ձեր անձնական տվյալները կամ այնպիսի տվյալներ, որոնց միջոցով հնարավոր է պարզել Ձեր ինքնությունը, եթե չեք ցանկանում բացահայտվել:

Ազդարարման վարույթը

Ներքին և արտաքին ազդարարման վարույթները գրեթե նույնական են՝ չնչին տարբերություններով: Այստեղ ազդարարման վարույթը հիմնականում ներկայացվում է

[18] Նույն տեղում, հոդված 11, մաս 1
[19] Նույն տեղում, հոդված 11, մաս 2
[20] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 3
[21] ՀՀ կառավարության 439-Ն որոշում՝ ընդունված 03.05.2018թ., հավելված 1, կետ 1
[22] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 4
[23] Նույն տեղում, հոդված 9, մաս 2
[24] Նույն տեղում, հոդված 8, մաս 5
[25] Նույն տեղում, հոդված 9, մաս 3

ներքին ազդարարման լույսի ներքո, և լրացուցիչ նշվում են այն տարբերությունները, որոնք առկա են արտաքին ազդարարման դեպքում:

Ներքին ազդարարման սկիզբը օրենքը համարում է հաղորդումը ներկայացնելու պահը[26]: Եթե ազդարարը 4 հնարավոր սուբյեկտների փոխարեն որևէ այլ անձի է ներկայացնում հաղորդումը, ապա վերջինս պետք է հաղորդումը անհապաղ փոխանցի կամ իրավասու մարմնի ղեկավարին, կամ էլ նրա լիազորած անձին[27]:

Հաղորդումը ստանալուց հետո իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձը պետք է անհապաղ, բայց ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրվա ընթացքում, հաշվառի հաղորդումը[28], որից հետո պետք է հարուցի վարույթ կամ մերժի վարույթի հարուցումը: Իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձը հաղորդման հաշվառման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում վարույթ է հարուցում, եթե իր իրավասության շրջանակներում առկա են հիմքեր[29]: Նա իրավասությունների շրջանակում միջոցներ է ձեռնարկում հաղորդման իսկությունը ստուգելու համար, իսկ եթե այդ ընթացքում հայտնաբերում է հանցագործության առերևույթ հատկանիշներ, անհապաղ դիմում է դատախազություն[30]:

Ազդարարման վարույթը սխեմատիկ ձևով ներկայացված է ստորև.

Սխեմա 2. Ազդարարման վարույթը



[26] Նույն տեղում, հոդված 6, մաս 1
[27] Նույն տեղում, հոդված 6, մաս 2
[28] Նույն տեղում, հոդված 6, մաս 3, կետ 1
[29] Նույն տեղում, հոդված 6, մաս 3, կետ 2
[30] Նույն տեղում, հոդված 6, մաս 3, կետ 4 և 5

Իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձն անկախ վարույթ հարուցելուց կամ չհարուցելուց՝ իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման համար[31]: Բացի այդ, նա հնարավորություն է տալիս ազդարարին ներկայացնելու պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ[32]: Իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձն ապահովում է ազդարարի անձնական տվյալների գաղտնիությունը, բացառությամբ անբարեխիղճ ազդարարման դեպքերի:[33]:

Դուք ունեք Ձեր տվյալների գաղտնիության պահպանման իրավունք: Իրավասու մարմինը կամ նրա լիազորած անձը չպետք է բացահայտեն Ձեր անձնական տվյալները:

Եթե հարուցվում է վարույթ, ապա իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձը նաև ապահովում է հարուցված վարույթի գաղտնիությունը[34], և ազդարարի պահանջով ապահովում է վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը նրան[35]: Հարկ է նշել, որ այստեղ առկա է օրենսդրական թերություն և ներքին ազդարարման դեպքում ապահովվում է հարուցված վարույթի գաղտնիությունը, իսկ արտաքինի դեպքում ընդհանրապես վարույթի գաղտնիությունը՝ դիմելու պահից սկսած[36]:

Վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է[37], և դրա արդյունքում ընդունվում է համապատասխան ակտ, որի ընդունման մասին ազդարարը ծանուցվում է ակտի ընդունման պահից 3 օրվա ընթացքում: Ազդարարման վարույթի ընթացքը սխեմատիկ ձևով ներկայացված է ստորև.

Սխեմա 3. Ազդարարման հարուցված վարույթի ընթացքը



[31] Նույն տեղում, հոդված 6, մաս 3, կետ 6
[32] Նույն տեղում, հոդված 6, մաս 3, կետ 9
[33] Նույն տեղում, հոդված 6, մաս 3, կետ 7
[34] Նույն տեղում, հոդված 6, մաս 3, կետ 3
[35] Նույն տեղում, հոդված 6, մաս 3, կետ 8
[36] Նույն տեղում, հոդված 6, մաս 3, կետ 3 և հոդված 7, մաս 3, կետ 3
[37] Նույն տեղում, հոդված 6, մաս 6

Ինչպես վարույթի իրականացումը, այնպես էլ դրա նկատմամբ ընդհանուր վերահսկողությունը վերապահված է իրավասու մարմնի ղեկավարին կամ նրա լիազորած անձին[38]:

Հարկ է նշել, իրավասու մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած անձի կողմից վերոնշյալ պարտավորությունների չկատարման դեպքում նախատեսված է վարչական պատասխանատվություն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 41.5-րդ հոդվածով, եթե դրանք չեն պարունակում հանցագործության հատկանիշներ: Մասնավորապես՝ այն սահմանում է 100,000-200,000 ՀՀ դրամի չափով տուգանք հետևյալ գործողությունների համար[39]:

Պատասխանատվություն առաջացնող գործողություններ

- Հաղորդումը չհաշվառելը
- Հիմքերի առկայության դեպքում վարույթ չհարուցելը
- Հարուցված վարույթի գաղտնիությունը չապահովելը
- Ազդարարին պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ ներկայացնելու հնարավորություն չընձեռնելը
- Ազդարարի պահանջով վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկություններ չտրամադրելը
- Հաղորդման իսկությունը ստուգելու համար միջոցներ չձեռնարկելը
- Ազդարարին վնասակար գործողություններից պաշտպանելու համար միջոցներ չձեռնարկելը
- Վնասակար գործողություններից և դրանց հետևանքների վերացման նպատակով միջոցներ չձեռնարկելը

Նշվածից բացի, ազդարարի անձնական տվյալները մշակելու ընթացքում գաղտնիությունը չապահովելը պատժվում է տուգանքով՝ 300,000-400,000 ՀՀ դրամի չափով[40]:

Վերոգրյալը վերաբերում է այն դեպքերին, երբ համապատասխան անձը չի կատարել ակտիվ գործողություններ գաղտնիությունը խախտելու համար, և վերաբերում է հենց միայն ներքին ազդարարմանն առնչվող անձին: Սակայն այն դեպքերի առումով, երբ ազդարարի տվյալներն ապօրինի հրապարակվում են այն անձի կողմից, ում այդ տեղեկությունները վստահվել կամ հայտնի են դարձել նրա ծառայողական գործունեության կապակցությամբ, առաջ է գալիս քրեական պատասխանատվություն, որը պատժվում է կամ տուգանքով՝ 100,000-300,000 ՀՀ դրամի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու և/կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 5 տարի ժամկետով, և/կամ կալանքով՝ առավելագույնը 3 ամիս ժամկետով, և/կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով[41]: Եթե նույն արարքն առաջացրել է ծանր հետևանքներ, ապա այդ արարքը պատժվում է 2-6 տարի ժամկետով ազատազրկմամբ

[38] Նույն տեղում, հոդված 6, մաս 5
[39] «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 41.5, մաս 1
[40] Նույն տեղում, հոդված 41.5, մաս 2
[41] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 341.2, մաս 1

կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու և/կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով[42]:

Հաղորդումների հաշվառման, ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանում է ՀՀ կառավարությունը[43], և դրանք հանդիսանում են նվազագույն պահանջներ:

Իրավասու մարմինն ինքնուրույն է սահմանում ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման, ձևակերպման, ինչպես նաև ազդարարին տրամադրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը[44]: Եթե այն չի ընդունում այդպիսի կարգ, ապա կիրառելի է դառնում ՀՀ կառավարության սահմանած կարգը[45]: Եթե ընդունում է, ապա պարտավոր է այդ կարգը տեղադրել իր պաշտոնական կայքում, իսկ կայքի բացակայության դեպքում՝ իր օգտին աշխատանք կատարող կամ իր կողմից մատուցվող ծառայություններից օգտվող յուրաքանչյուր անձի համար տեսանելի վայրում[46]:

Վերոնշյալ հաշվառման-ձևակերպման և պաշտպանության միջոցների իրականացման կարգը ՀՀ կառավարությունն ընդունել է 2018թ. մարտի 15-ին 272-Ն որոշմամբ: Համաձայն այդ կարգի, գրանցամատյանում արձանագրվում են այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են հաղորդման հաշվառման հերթական համարը, տարեթիվը, ազդարարի անունը, հաղորդման համառոտ բովանդակությունը, հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների ամբողջական նկարագիրը և դրանց արդյունքը, նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ, ինչպես նաև ազդարարի և գրանցամատյանը վարողի ստորագրությունը[47]: Գրանցամատյանում հաշվառվում են նաև այն հաղորդումները, որոնք ներկայացվել են ոչ իրավասու մարմին, և վերջինս օրենքով սահմանված կարգով այն վերահասցեագրել է իրավասու մարմնին[48]: Պատասխանատու անձը վարում է գրանցամատյանի փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակը[49], իսկ հաղորդման հաշվառման նպատակով կազմվում և վարվում է գործ, որում պետք է պահվեն նաև գրանցամատյանում արձանագրված տեղեկություններին վերաբերող բոլոր նյութերի պատճենները[50]: Ազդարարը ստորագրում է գրանցամատյանում:

Պաշտպանության միջոցների իրականացման կարգի առումով առաջին հիմնարար դրույթն այն է, որ «ազդարարման դեպքում ազդարարի անձնական տվյալները չբացահայտելու նպատակով փաստաթղթաշրջանառությունը կատարվում է իրավասու մարմնի կողմից նշանակված պատասխանատու անձի միջոցով»[51]: Բացի այդ, վարույթ հարուցելու մասին ակտի և վարույթի հետ կապված այլ փաստաթղթերի մեջ չեն նշվում ազդարարման փաստը և ազդարարի անձնական տվյալները[52]:

[42] Նույն տեղում, հոդված 341.2, մաս 2
[43] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 2
[44] Նույն տեղում, հոդված 5, մաս 3
[45] Նույն տեղում, հոդված 5, մաս 5
[46] Նույն տեղում, հոդված 5, մաս 4
[47] ՀՀ կառավարության 272-Ն որոշմամբ հաստատված հավելված 1, կետ 4
[48] Նույն տեղում, կետ 3
[49] Նույն տեղում, կետ 6
[50] Նույն տեղում, կետ 7
[51] ՀՀ կառավարության 272-Ն որոշմամբ հաստատված հավելված 2, կետ 3
[52] Նույն տեղում, կետ 4

Վնասակար գործողությունների կամ դրանց հետևանքներից պաշտպանելու նպատակով իրավասու մարմինն իր իրավասության շրջանակներում իրականացնում է հետևյալ գործողությունները[53]:

Իրավասու մարմնի կողմից ձեռնարկվող միջոցառումներ վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանելու համար

- Ապահովի տեղեկությունների գաղտնիությունը
- Ստեղծի իր ծառայողական պարտականությունների անարգել իրականացման համար բավարար պայմաններ
- Ապահովի արհեստականորեն հանձնարարականներով չծանրաբեռնելը՝ հանձնարարականների նկատմամբ հսկողություն սահմանելու միջոցով
- Գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտությունների դեպքում ձեռնարկի դրանց վերացման ուղղությամբ համապատասխան միջոցներ
- Անհրաժեշտության դեպքում՝ հնարավորության դեպքում տեղափոխի այլ աշխատասենյակ
- Ձեռնարկի համապատասխան միջոցներ ազդարարի աշխատանքային իրավունքների վերականգնման ուղղությամբ, այդ թվում՝ վերականգնի աշխատանքի, հատուցի նրա կրած վնասները
- Ձեռնարկի իրավիճակից բխող՝ ազդարարի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ այլ միջոցներ

Անհրաժեշտ է նկատել, որ ներքին ազդարարման դեպքում ազդարարի գաղտնիությունը բացարձակ է, իսկ արտաքինի դեպքում ազդարարը կարող է համաձայնություն տալ իր անձնական տվյալները բացահայտելու առումով, սակայն եթե դա չի արվում, ապա գաղտնիությունը պետք է պահպանվի:

Թե՛ ներքին և թե՛ արտաքին ազդարարման դեպքում, եթե վարույթի ընթացքում պարզվում է, որ ազդարարը հաղորդում ներկայացնելիս գործել է անբարեխղճորեն, ապա իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձը կարող է դադարեցնել ազդարարին պաշտպանության տրամադրումը, որի մասին որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում պետք է ծանուցի ազդարարին[54]:

[53] Նույն տեղում, կետ 5
[54] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 7 և հոդված 7, մաս 9

Գլուխ 3. Ազդարարների իրավունքները և պարտականությունները

Ազդարարների իրավունքները

Ազդարարների իրավունքները պայմանականորեն կարելի է բաժանել 5 մասի՝

1. նախնական իրավունքներ
2. գաղտնիության կամ անանունության իրավունք
3. ընթացակարգային իրավունքներ
4. բովանդակային իրավունքներ (այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքը)

Նախնական իրավունքների տակ պետք է հասկանալ ազդարարման իրավունքի պաշտպանության իրավունքը մինչև ազդարարումը: Այդ դրույթն արձանագրված է հետևյալ կերպ. *«Յուրաքանչյուր պայմանագիր կամ պայմանագրի դրույթ, որը միտված է անձին ազդարարման կամ ազդարարի պաշտպանության իրավունքից զրկելուն կամ այն սահմանափակելուն, առոչինչ է»*[55]: Այսինքն, անձին չի կարող կաշկանդվել որևէ պայմանագրով/պայմանով, որով ինքը կարող է զրկվել ազդարարելու իրավունքից:

Գաղտնիության կամ անանունության իրավունքը պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչպես է ներկայացվել հաղորդումը՝ անանուն ձևով էլեկտրոնային հարթակի միջոցով թե ոչ: Անանունության իրավունքը ծագում է միայն այն դեպքում, երբ հաղորդումը ներկայացվել է էլեկտրոնային հարթակի միջոցով:

Եթե ազդարարը հաղորդում է ներկայացրել ներքին ազդարարման կամ արտաքին ազդարարման միջոցով, ապա նա ձեռք է բերում իր անձնական տվյալների գաղտնիության իրավունք, որը կարող է վերացվել միայն երկու դեպքում՝

- երբ ազդարարը այդ մասին տալիս է իր համաձայնությունը,
- երբ ազդարարը գործել է անբարեխղճորեն, և ազդարարի ոչ բարեխիղճ գործողությունը պարունակում է հանցագործության հատկանիշներ, որի պատճառով հաղորդում ստացած անձը այդ մասին տեղյակ է պահում դատախազությանը:

Ընթացակարգային իրավունքների թվին են դասվում՝

- հաղորդման անհապաղ հաշվառումը (ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրվա ընթացքում),
- վարույթի ընթացքի (որը սկսվում է ազդարարում ներկայացնելու պահից) և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների ստացումը,
- պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ ներկայացնելը:

Անանուն ազդարարման դեպքում կան որոշ առանձնահատկություններ: Մասնավորապես, անանուն ազդարարը փաստաթղթերն ու ձայնագրությունները կարող է կցել էլեկտրոնային

[55] Նույն տեղում, հոդված 10, մաս 4

հարթակի միջոցով: Անանուն ազդարարում կատարելու պահից ազդարարը «Հետադարձ կապ» պատուհանի միջոցով ստանում է անհատական հասցե և անհատական հասցե մուտք գործելու համար անհրաժեշտ պայմանական անուն և գաղտնաբառ: Այս պատուհանի միջոցով, դատախազության կողմից նշանակված պատասխանատու անձինք կարող են լրացուցիչ փաստեր և տեղեկություններ խնդրել անանուն ազդարարից՝ առանց իմանալու նրա ով լինելը:

Դիմումներ ներկայացնելու իրավունքը, ինչպես նաև հաղորդման հաշվառումը չեն վերաբերում անանուն ազդարարմանը, քանի որ այն իրենից ներկայացնում է հաղորդման ավտոմատ հաշվառում համակարգում:

Ինչ վերաբերում է վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների ստացմանը և պարզաբանումներ և փաստաթղթեր ներկայացնելուն, ապա անանուն ազդարարն ունի այս իրավունքները, քանի որ, համաձայն «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագրի»[56], ծանուցումների պատուհանի միջոցով ազդարարին ծանուցվում է հաղորդման ընթացքի, այդ թվում՝ հաղորդման ստուգման և դրա արդյունքների վերաբերյալ, իսկ «Հետադարձ կապ» պատուհանի միջոցով հարթակին հասանելիություն ունեցող մարմինը կարողանում է կապ հաստատել ազդարարի հետ՝ հավաքելու համար անհրաժեշտ տեղեկություններ և փաստեր, որոնք առնչվում են հաղորդմանը:

Բովանդակային իրավունքների տակ պետք է հասկանալ վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից ազդարարի պաշտպանության իրավունքը, որն օրենքում ձևակերպված է այսպես. *«ազդարարն ունի ... վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք»*[57]*:*

Վնասակար գործողությունը օրենքում ձևակերպվում է որպես *«գործողություն կամ անգործություն, որով ազդարարման համար ազդարարին կամ նրա հետ փոխկապակցված անձին հասցվում է վնաս՝ լուծելով աշխատանքային պայմանագիրը կամ նրան ավելի ցածր պաշտոնի փոխադրելով կամ նրա հաստիքը կրճատելով կամ նրան աշխատանքային առաջադրանքներ չտրամադրելով կամ արհեստականորեն հանձնարարականներով կամ առաջադրանքներով ծանրաբեռնելով կամ նրա աշխատանքային գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտելով կամ նրա նկատմամբ խրախուսանքի միջոցների կիրառումը մերժելով կամ նրա աշխատավարձը կամ պարգևավճարները կրճատելով կամ նրա գույքին վնաս պատճառելով կամ նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելով կամ նրան պատասխանատվության ցանկացած այլ միջոցի ենթարկելով, որը կվատթարացնի նրա գույքային դրությունը կամ չի արդարացնի գույքային կամ այլ առաջխաղացման ակնկալիքները կամ ազդարարումից հետ պահելուն ուղղված կամ ազդարարման հետ կապված այլ ներգործության միջոցներ կիրառելով»*[58]*:*

Վերոնշյալից բխում է, որ վնասակար գործողությունը պարունակում է հետևյալ 3 տարրերը՝

- դա դրսևորվում է գործողությամբ կամ անգործությամբ
- դրսևորվում է ազդարարի կամ նրա հետ փոխկապակցված անձի հանդեպ
- գործողության կամ անգործության արդյունքում ձևավորվում է վնաս:

[56] ՀՀ կառավարության 439-Ն որոշում՝ ընդունված 12.04. 2018թ.
[57] «Ազդարարների համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 2
[58] Նույն տեղում, հոդված 2, մաս 1, ենթակետ 6

Վնասը բաժանվում է 3 տեսակի՝ աշխատանքային, գույքային և այլ:

Աշխատանքային վնաս	Գույքային վնաս	Այլ վնաս
• Աշխատանքային պայմանագրի լուծում • Ավելի ցածր պաշտոնի փոխադրում • Հաստիքի կրճատում • Աշխատանքային առաջադրանքների չտրամադրում • Արհեստական հանձնարարականներով ծանրաբեռնում • Արհեստական առաջադրանքներով ծանրաբեռնում • Աշխատանքային գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտություն • Խրախուսանքնի միջոցների կիրառման մերժում • Աշխատավարձի կրճատում • Պարգևավճարների կրճատում • Կարգապահական վարույթի հարուցում:	• Պատասխանատվության ցանկացած այլ միջոցի ենթարկում, որով վատթարացվում է անձի գույքային դրությունը կամ չեն արդարացվում գույքային կամ այլ առաջխաղացման ակնկալիքները • Գույքին վնաս պատճառելը:	• Ազդարարումից հետ պահելուն ուղղված կամ ազդարարման հետ կապված այլ ներգործության միջոցների կիրառում:

Այլ վնասն ընդգրկուն է և կարող է ներառել ցանկացած վնասի ձև, որը թեև այժմ հայտնի չէ, սակայն ապագայում կարող է հորինվել ազդարարման դեմ հանդես եկող անձանց կողմից և սահմանվում է որպես *«ազդարարումից հետ պահելուն ուղղված կամ ազդարարման հետ կապված այլ ներգործության միջոցների կիրառում»:*

Վնասակար գործողության առնչությամբ անհրաժեշտ է նկատել, որ բովանդակային իրավունքների թվին է դասվում նաև ազդարարի դատական պաշտպանության իրավունքը, որը սահմանվել է հետևյալ կերպով՝ *«ազդարարը, որի դեմ ազդարարման հետ կապված ձեռնարկվել է վնասակար գործողություն, ունի դատական պաշտպանության իրավունք»*[59]*:*

Կարևոր է նշել, որ հաղորդում ներկայացրած անձը կամ ազդարարը, ում հաղորդումն ուղարկվել է քրեական հետապնդման մարմիններ, ենթակա է պաշտպանության ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով[60]: Պաշտպանության իրավունք տրվում է նրանց, ովքեր կարող են հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը[61]:

[59] Նույն տեղում, հոդված 12, մաս 1
[60] Նույն տեղում, հոդված 10, մաս 3
[61] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 98, մաս 1

Որպես կարևոր հանգամանք կարելի է նշել, որ «մերձավոր» է համարվում այն անձը, որի պաշտպանության նպատակով ազդարարը գրավոր դիմում է ներկայացնում քրեական վարույթն իրականացնող մարմնին[62], որը և հանդիսանում է պաշտպանություն իրականացնող մարմին[63]: Վարույթն իրականացնող մարմինը դատարանն է, իսկ մինչդատական վարույթում այդպիսին է հանդիսանում հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը[64]:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ազդարարին տրամադրվող պաշտպանության միջոցները

- Անձին, ում կողմից սպասվում է պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում, պաշտոնապես նախազգուշացնելը
- Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը
- Պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը
- Պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը
- Վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային ու այլ հաղորդումները գաղտնալսելը
- Պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը
- Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելը, որը կբացառի նրանց կողմից պաշտպանվող անձի հանդեպ բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը
- Պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը
- Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը
- Պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը
- Դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը
- Դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման

Պաշտպանության միջոցների կիրառումը կարող է լինել կամ վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ, կամ անձի դիմումի հիման վրա[65]: Եթե անձն է դիմում, ապա առավելագույնը 24 ժամվա ընթացքում պետք է դիմումի հիման վրա որոշում կայացվի, և եթե կայացվում է բացասական որոշում, ապա 5 օրվա ընթացքում անձը կարող է բողոքարկել այդ որոշումը:

[62] Նույն տեղում, պարբերություն 2
[63] Նույն տեղում, մաս 2
[64] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 6, ենթակետ 30
[65] Այստեղ և այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 98, մաս 3-5

Բացի այդ, պաշտպանության միջոցներ ձեռնարկելու դիմումի մերժումը արգելք չէ նոր դիմումի համար, եթե նա ենթարկվել է սպառնալիքի կամ հարձակման կամ ի հայտ են եկել նախորդ դիմումում չնշված այլ հանգամանքներ[66]:

Փոխկապակցված անձանց իրավունքները

Ազդարարի հետ փոխկապակցված անձինք են համարվում ազդարարի ամուսինը, զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները[67]: Ազդարարին տրամադրվող պաշտպանության բոլոր միջոցներից իրավունք ունի օգտվել նրա հետ փոխկապակցված անձը ևս, եթե ողջամտորեն հիմնավորում է, որի ազդարարի հետ ունեցած կապի պատճառով նրա դեմ կարող են կատարվել վնասակար գործողություններ[68]: Օրենքով նախատեսված է, որ նրանք կարող են դիմել իրավասու մարմնին, որպեսզի վերջինս իր իրավասությունների շրջանակում կատարի ստորև բերված գործողությունները[69], սակայն, իրականում, այստեղ կա օրենսդրական բաց և պարզ չէ, թե փոխկապակցված անձը որ իրավասու մարմնին պետք է դիմի այդ գործողություններն իրականացնելու համար:

Իրավասու մարմնի կողմից ձեռնարկվող միջոցառումներ վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանելու համար

- Ապահովել տեղեկությունների գաղտնիությունը
- Ստեղծել իր ծառայողական պարտականությունների անարգել իրականացման համար բավարար պայմաններ
- Ապահովել արհեստականորեն հանձնարարականներով չծանրաբեռնելը՝ հանձնարարականների նկատմամբ հսկողություն սահմանելու միջոցով
- Գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտությունների դեպքում ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ համապատասխան միջոցներ
- Անհրաժեշտության դեպքում՝ հնարավորության դեպքում տեղափոխել այլ աշխատասենյակ
- Ձեռնարկել համապատասխան միջոցներ ազդարարի աշխատանքային իրավունքների վերականգնման ուղղությամբ, այդ թվում՝ վերականգնել աշխատանքի, հատուցել նրա կրած վնասները
- Ձեռնարկել իրավիճակից բխող՝ ազդարարի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ այլ միջոցներ

Նշվածները հանդիսանում են նվազագույն պահանջներ, իսկ կոնկրետ կառույցը, իր ներքին կանոնակարգին համապատասխան, փոխկապակցված անձանց կարող է տրամադրել ավելի լայն երաշխիքներ:

Բացի այդ, ազդարարը կարող է դիմել նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին, որպեսզի ստանա պաշտպանության միջոցներ նաև իր մերձավոր ազգականի համար: Հարկ է շեշտել, որ դիմողը պետք է լինի հենց ազդարարը, եթե վարույթն իրականացնող մարմինն իր նախաձեռնությամբ չորոշի տրամադրել պաշտպանության միջոցներ:

[66] Նույն տեղում, մաս 6
[67] Նույն տեղում, հոդված 2, մաս 1, ենթակետ 3
[68] Նույն տեղում, հոդված 10, մաս 5
[69] ՀՀ կառավարության 272-Ն որոշում, հավելված 2, կետ 5

Ինչ վերաբերում է դատական պաշտպանությանը, ապա փոխկապակցված անձն ունի նման իրավունք, և այն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով[70]:

Ազդարարի պարտականությունները

Ազդարարի միակ պարտականությունը բարեխիղճ լինելն է: Ազդարարը գործում է բարեխղճորեն, եթե ազդարարելու պահին կասկածի ողջամիտ հիմքեր ունի կոռուպցիոն բնույթի դեպքի, կամ շահերի բախման, կամ էթիկայի կանոնների, կամ անհամատեղելիության պահանջների, կամ այլ սահմանափակումների, կամ հայտարարագրման հետ կապված խախտման, կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի, կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ, եթե իր համոզմամբ տեղեկությունը ճշմարտացի է, և եթե նախքան ազդարարումը նա իր իրական հնարավորությունների սահմաններում միջոցներ է ձեռնարկել ստուգելու տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը[71]:

Այսինքն, ազդարարումը բարեխիղճ է, եթե

- ազդարարն ունի ողջամիտ կասկածի հիմքեր,
- ազդարարի համոզմամբ տեղեկությունը ճշմարտացի է,
- նախքան ազդարարումը նա իր իրական հնարավորությունների սահմաններում միջոցներ է ձեռնարկել ստուգելու տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը: Այսինքն, պոտենցիալ ազդարարը պետք է կատարի որոշակի աշխատանք՝ համոզվելու համար, որ իր կասկածները հիմնավոր են, և միայն դրանից հետո կատարի ազդարարում:

Ազդարարը անբարեխիղճ է գործում, եթե.

- չի ապահովել վերոգրյալ 3 տարրերը, կամ
- ազդարարումը կատարել է ապօրինի եղանակով, այդ թվում՝ հանցագործության կատարմամբ կամ մարդու սահմանադրական իրավունքների խախտմամբ ձեռք բերված տեղեկությունների հիման վրա, կամ
- իր կամ այլ անձի համար պահանջում կամ ստանում է որևէ առավելություն (այսինքն՝ զբաղվում է շորթմամբ), կամ
- այլ անձի վնաս պատճառելու նպատակով դիտավորությամբ հաղորդում է կեղծ տեղեկություններ:

Փոխկապակցված անձանց պարտականությունները

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում փոխկապակցված անձի համար պարտականություններ: Սակայն փոխկապակցված անձինք ունեն ընդհանուր

[70] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 2 և 3
[71] Նույն տեղում, հոդված 13, մաս 1

բնույթի պարտականություններ, ինչպես, օրինակ, պետական կառույցներին կեղծ տեղեկություններ չտրամադրելը:

Գլուխ 4. Ի՞նչպես պաշտպանել սեփական և փոխկապակցված անձանց իրավունքները

Ինչպես արդեն նշվել է, վնասակար գործողությունների բովանդակությունը (վնաս ասվածը) սահմանվել է որպես աշխատանքային, գույքային և *«ազդարարումից հետ պահելուն ուղղված կամ ազդարարման հետ կապված այլ ներգործության միջոցների կիրառում»:*

Այս գլխում ազդարարի իրավունքների պաշտպանությունը դիտարկվում է հետևյալ համատեքստերում՝

1. խտրականություն (աշխատանքային և ոչ միայն)
2. գույքային վնաս կամ դրա սպառնալիք
3. սպանություն/առողջությանը վնաս պատճառելը կամ սպառնալիքը:

Այս համատեքստերից յուրաքանչյուրը դիտարկվում է երեք սուբյեկտի տեսանկյունից՝ ազդարար, փոխկապակցված անձ և սխալմամբ ընկալվող ազդարար:

Խտրականություն

Ինչպես արդեն նշվեց, ազդարարների պաշտպանության համատեքստում դիտարկվում է վնասի 3 տեսակ՝ աշխատանքային, գույքային և «ազդարարումից հետ պահելուն ուղղված կամ ազդարարման հետ կապված այլ ներգործության միջոցների կիրառում»: Խտրականությունն ամբողջովին տեղավորվում է այս վերջին տեսակի մեջ: Աշխատանքային վնասի տեսակի մեջ օրենքը նախատեսում է խտրական վերաբերմունքի դրսևորման այնպիսի ձևեր, ինչպիսիք են[72].

- աշխատանքային պայմանագրի լուծում
- ավելի ցածր պաշտոնի փոխադրում
- հաստիքի կրճատում
- աշխատանքային առաջադրանքների չտրամադրում
- արհեստական հանձնարարականներով ծանրաբեռնում
- արհեստական առաջադրանքներով ծանրաբեռնում
- աշխատանքային գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտություն
- խրախուսանքի միջոցների կիրառման մերժում
- աշխատավարձի կրճատում
- պարգևավճարների կրճատում
- կարգապահական վարույթի հարուցում:

Եթե ազդարարը ենթակա է դառնում վերոգրյալ գործողություններից որևէ մեկին, նա պետք է դիմի իրավասու մարմնի ղեկավարին կամ լիազորին՝ կախված տվյալ կառույցի առանձնահատկություններից: Եթե համապատասխան ղեկավարը կամ լիազոր անձը քայլեր չի ձեռնարկում այս գործողություններից ազդարարին պաշտպանելու համար, ապա ազդարարը պետք է դիմի ոստիկանություն, որը պարտավոր է արձանագրություն կազմել

[72] Նույն տեղում, հոդված 2, մաս 1, ենթակետ 6

նույն օրենսգրքի 41.5 հոդվածի վերաբերյալ գործերով[73], իսկ վերջինս սահմանում է, որ *«ազդարարին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով միջոցներ չձեռնարկելը»* պատժվում է 100,000 - 200,000 ՀՀ դրամի չափով, եթե բացակայում են հանցագործության հատկանիշներ: Ոստիկանությունն այնուհետև պետք է դիմի ՀՀ վարչական դատարան, եթե իսկապես գտնում է, որ համապատասխան իրավասու մարմնի ղեկավարը կամ լիազոր ներկայացուցիչը չի ձեռնարկել քայլեր ազդարարին վնասակար գործողություններից պաշտպանելու համար[74]: Եթե ազդարարը համակարծիք չէ ոստիկանության հետ, ապա կարող է բողոքարկել ոստիկանության գործողությունները կամ վերադասության կարգով՝ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, և/կամ դիմել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչական դատավարության վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով սահմանված կարգով:

Նույն կարգավորումը տարածվում է նաև սխալմամբ ընկալվող ազդարարի վրա, եթե այդ ազդարարն աշխատում է «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի իրավական ռեժիմի կարգավորումների ենթակա կառույցում՝ մեկ տարբերությամբ, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հոդված 41.5-ը չի տարածվում սխալմամբ ընկալվող ազդարարի վրա:

Սխեմա 4. Ազդարարի, սխալմամբ ընկալվող ազդարարի և փոխկապակցված անձի քայլերի հաջորդականությունը խտրականության առաջացման դեպքում



Փոխկապակցված անձի պարագայում կարգավորումներն այլ են. նա պետք է դիմի և ողջամտորեն հիմնավորի, որ փոխկապակցվածության պատճառով իր դեմ կարող են կիրառվել վնասակար գործողություններ: Եթե դրանք արդեն իսկ կատարվել են, ապա փոխկապակցած անձին մնում է միայն դատական պաշտպանության ճանապարհը: Բացի

[73] ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հոդված 254
[74] Նույն տեղում, հոդված 223, ենթակետ 1

այդ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի վերոնշյալ հոդվածը չի կիրառվում փոխկապակցված անձի նկատմամբ:

Գույքային վնաս կամ դրա սպառնալիք

Ինչպես արդեն նշվել է, օրենքը ազդարարների համակարգի համատեքստում գույքային վնասը բաժանում է 2 տեսակի՝

- պատասխանատվության ցանկացած այլ միջոցի ենթարկում, որով վատթարացվում է անձի գույքային դրությունը կամ չի արդարացվում գույքային կամ այլ առաջխաղացման ակնկալիքները,
- գույքին վնաս պատճառելը:

Գույքային վնասի կամ դրա սպառնալիքի պարագայում գործում են նույն ընթացակարգերը, որոնք կիրառվում են խտրականության պարագայում: Սակայն, այստեղ պետությունը տալիս է լրացուցիչ պաշտպանություն ազդարարին և փոխկապակցված անձին՝ քրեականացնելով նրանց սպանության, առողջությանը վնաս պատճառելուն կամ գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 341.1-ի՝ *«Կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ հաղորդում տվող անձի կամ նրա հետ փոխկապակցված անձանց սպանության, առողջությանը վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը, որը կապված է կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ հաղորդում տալու հետ, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինսապատիկից հարյուրհինսապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»*[75]:

Սպանություն/առողջությանը վնաս պատճառելը կամ սպառնալիքը

Ազդարարման համակարգի ներքո օրենքի կողմից նշված վնասի երրորդ տեսակը համարվում է *«ազդարարումից հետ պահելուն ուղղված կամ ազդարարման հետ կապված այլ ներգործության միջոցների կիրառումը»,* որի տակ կարող է ընկնել ցանկացած գործողություն/ներգործություն, որն ուղղված է ազդարարումից հետ պահելուն:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 341.1-ը վերաբերելի է ազդարարի և նրա փոխկապակցված անձի սպանության, ֆիզիկական հարձակման և առողջությանը վնաս պատճառելու սպառնալիքին: Եթե արդեն գոյություն է ունեցել ֆիզիկական հարձակում,

[75] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 341.1

ապա խնդիրներ չեն կարող ծագել, իսկ եթե հնչել է ֆիզիկական հարձակման սպառնալիք, ապա այդ դեպքում պետք է ապացուցել, որ եղել է այդ *«սպառնալիքի իրականացման իրական վտանգ»*: Այնուամենայնիվ, նվազագույն սպառնալիքի դեպքում հնարավոր է և պետք է դիմել իրավապահ մարմնին:

Ազդարարը և սխալմամբ ընկալվող ազդարարը, սակայն ոչ փոխկապակցված անձը, սպառնալիքի մասին կարող են դիմել նաև իրավասու մարմնի ղեկավարին կամ նրա լիազոր անձին: Դրանց կանխման ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու պարագայում վերջինս կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության՝ համաձայն ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի[76]:

Սխեմա 5. Ազդարարի, սխալմամբ ընկալվող ազդարարի կամ փոխկապակցված անձի քայլերի հաջորդականությունը կյանքի կամ առողջությանը վնաս հասցնելու սպառնալիքի առաջացման դեպքում



Հավելված 2-ում ազդարարների, փոխկապակցված անձանց և սխալմամբ ընկալվող ազդարարներից յուրաքանչյուրի համար ներկայացված է քայլերի հաջորդականության աղյուսակ՝ վերոգրյալ վնասների դեպքերի համար:

[76] Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդված 41.5, մաս 1

ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՀՈՒՇՈՒՄՆԵՐ

Որպես կանոն, ազդարարին կամ փոխկապակցված անձին առաջին հերթին ներկայացվում է սպառնալիք բանավոր կերպով: Հնարավորինս պետք է խուսափել որևէ շփումից պոտենցիալ սպառնացողների հետ, որպեսզի ապագայում Ձեր խոսքերը չխեղաթյուրվեն և Ձեր դեմ չօգտագործվեն: Եթե Ձեզ համար ակնհայտ է, որ անձը ցանկանում է Ձեզ հետ խոսել հենց Ձեր ազդարարման վերաբերյալ, կամ Ձեզ հետ փոխկապակցված անձ ազդարարի մասին, ապա դիմե՛ք Ձեր կառույցի ղեկավարին կամ նրա լիազորված անձին, ով պատասխանատու է ազդարարների պաշտպանության համար:

Եթե, այնուամենայնիվ, Ձեզ չի հաջողվում խուսափել զրույցից, ապա հնարավորինս փորձե՛ք զրույցը վարել հրապարակային որևէ վայրում, որտեղ առկա է տեսանկարահանում: Եթե հնարավոր է, որ այդ զրույցին ներկա գտնվեն մարդիկ, ովքեր, Ձեր կարծիքով անկեղծ ու ազնիվ են և ավելի ուշ չեն վախենա տալ ճշմարիտ ցուցմունքներ, ապա ապահովե՛ք նրանց ներկայությունը Ձեր խոսակցությանը:

Միշտ արժե՛ կատարել զրույցի տեսա/ձայնագրություն, եթե կա նման հնարավորություն և եթե ըստ կոնկրետ հանգամանքների, վայրի և ժամանակի Ձեր գնահատման, դա չի ստեղծի վտանգ հենց այդ պահին կամ ավելի ուշ: Եթե, այնուամենայնիվ, Դուք արդեն հայտնվել եք իրավիճակում, երբ չեք կարող օբյեկտիվորեն խուսափել զրույցից, և չեք կարող նկարահանել կամ ձայնագրել, և չեք գտնվում հանրային կամ տեսանկարահանվող վայրում, ապա զրույցից անմիջապես հետո պատմե՛ք տեղի ունեցածի մասին նվազագույնը 3 հոգու՝ իրավասու մարմնի ղեկավարին կամ նրա լիազորված անձին, և Ձեզ համար վստահելի երկու այլ մարդու, ովքեր արդեն իսկ տեղյակ են Ձեր ազդարարման մասին: Եթե չունեք 2 վստահելի անձ, ապա կատարե՛ք տեսա/ձայնագրում և պահե՛ք այն համացանցում:

Եթե դուք անանուն ազդարար եք, ապա էլեկտրոնային հարթակի միջոցով անմիջապես հայտնե՛ք Ձեզ հետ տարված զրույցի մասին, դիմե՛ք դատախազություն՝ բացահայտելով Ձեր անձը, դուրս եկե՛ք անանունությունից և սկզբից բանավոր, իսկ որոպեներ անց՝ գրավոր դիմե՛ք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով պաշտպանության միջոցներ ստանալու համար: Մի՛ մոռացեք Ձեր արած ձայնագրությունների և վստահելի անձանց հայտնելու մասին, եթե ունեք այդպիսի մարդիկ:

Փորձե՛ք կողմնորոշվել կոնկրետ իրավիճակում և միշտ առաջնորդվե՛ք այդ իրավիճակի Ձեր գնահատականով, եթե գտնում եք, որ արժե սկզբից դիմել դատախազություն և միայն հետո ձայնագրությունները տեղադրել համացանցանցային համակարգերում կամ պատմել Ձեզ հավատարիմ մարդկանց, ապա այդպես վարվեք: Հիշե՛ք, որ ամենակարևորը Ձեր և Ձեզ հետ փոխկապակցված անձանց անվտանգությունն է:

Բացի այդ, հնարավորինս փաստաթղթավորե՛ք ամեն ինչ, մանավանդ, եթե Ձեր հանդեպ խտրական մոտեցում են ցուցաբերում: Ձեզ խտրականության ենթարկել փորձով աշխատակիցների հետ աշխատե՛ք շփվել միայն էլեկտրոնային նամակների միջոցով:

Գլուխ 5. Լրատվամիջոցների դերը և ազդարարումը

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում ազդարարում զանգվածային լրատվամիջոցների միջոցով: Թեև պրակտիկայում այդպիսի ազդարարում միանգամայն հնարավոր է, սակայն տեղեկություն տվողը չի կարող համարվել ազդարար և օգտվել համապատասխան պաշտպանության միջոցներից:

Սրան զուգահեռ, «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է, որ *«լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը»*[77]: Այս կանոնից կա մի բացառություն, երբ դատարանը կարող է պարտադրել լրագրողին ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով բացահայտել տեղեկատվության աղբյուրը, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, և եթե սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները[78]: Այսինքն, տեղեկություն հաղորդողն ի վերջո կարող է բացահայտվել դատական քննության ընթացքում, սակայն միևնույնն է, օրենքի առումով դա չի համարվում ազդարարում:

«Զանգվածային լրատվության մասին» օրենքը չի կարգավորում թե արդյոք դատարանի կողմից որոշման կայացումը պետք է լինի դատական քննության ընթացքում թե մինչև այդ: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ևս այս առնչությամբ հստակ կարգավորումներ չունի, սակայն նշված օրենսգրքի մեկ այլ հոդվածից կարելի է եզրակացնել, որ դա պետք է լինի դատական քննության ընթացքում. *«Եթե դատարանի որոշմամբ լրատվական գործունեություն իրականացնողին կամ լրագրողին պարտադրվում է բացահայտել տեղեկատվության աղբյուրը, ապա լրատվական գործունեություն իրականացնողի կամ լրագրողի միջնորդությամբ դատական քննությունն իրականացվում է դռնփակ»*[79]:

Հաշվի առնելով, որ լրատվամիջոցների միջոցով ազդարարումը կարող է ապագայում հանգեցնել անձի բացահայտման, գաղտնիության ապահովման հնարավորությունից օգտվելու նպատակով խորհուրդ տրվում միաժամանակ իրականացնել ներքին. արտաքին կամ էլեկտրոնային հարթակի միջոցով ազդարարում և միայն ի լրումն դրանցից որևէ մեկի՝ նույնն անել լրատվամիջոցների միջոցով: Բոլոր դեպքերում, լրատվամիջոցների միջոցով ազդարարում արժե անել միայն այն դեպքում, երբ պատրաստ եք անձի բացահայտման և վստահ եք, որ ներքին, արտաքին կամ անանուն ազդարարման արդյունքում համապատասխան կառույցները բացարձակ շահագրգռված չեն գործին պատշաճ ընթացք տալու:

Լրատվամիջոցով հաղորդում տալու օրինակ

[77] «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 2
[78] Նույն տեղում
[79] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 16, մաս 3

«Հայ-ինֆո» շաբաթաթերթի լրագրող Պետրոս Պետրոսյանը իրականացրել է կոռուպցիոն հետաքննություն Վանաձոր քաղաքի բուհերից մեկում դասախոսների շրջանում կոռուպցիոն դեպքերի առումով: Ուսանողուհի Ա.Կ.-ն համաձայնվել է հարցազրույց տալ լրագրողին միայն այն պայմանով, որ իր տվյալները չեն բացահայտվի: Լրագրող Պետրոսյանը նաև վստահեցրել է ուսանողուհուն, որ նա, հարցազրույց տալով, կմնա գաղտնի և կհանդիսանա անանուն ազդարար:
Նյութը հրապարակվելուց հետո ՀՀ գլխավոր դատախազությունը համապատասխան մարմնին հանձնարարում է հարուցել քրեական գործ: Քննիչը պրպտելով հայտնաբերում է ուսանողուհուն: Ահաբեկված Ա.Կ.-ն զանգում է լրագրողին՝ բողոքելով, որ վերջինս խախտել է իրենց պայմանավորվածությունը՝ ինքը պետք է մնար անանուն, քանի որ հարցազրույց տալով՝ ինքը կատարել է անանուն ազդարարում:
Լրագրող Պետրոսյանի գիտելիքների պակասի պատճառով ուսանողուհի Ա.Կ.-ն ընկել է մոլորության մեջ և չի իմացել, որ ինքն անանուն ազդարարում չի կատարում, և որ անանուն ազդարարումը հնարավոր է միայն էլեկտրոնային հարթակի միջոցով:

Գլուխ 6. Ազդարարման շրջանակը և մասնավոր հատվածը

Ինչպես նշվել է վերևում, մասնավոր ոլորտը, որպես այդպիսին, չի ընկնում «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի իրավական ռեժիմի տակ, սակայն օրենքը ազդարարումը սահմանում է որպես *«ազդարարի կողմից .... հանրային նշանակության կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդում սույն օրենքով նախատեսված իրավասու անձին կամ մարմին»*[80]:

Որպես հանրային նշանակության կազմակերպություն մեկ այլ օրենք սահմանում է *«ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ»*[81]:

Այսինքն, մասնավոր կազմակերպություններից միայն ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող հետևյալ կազմակերպություններն են ընկնում ազդարարման իրավական ռեժիմի տակ: Դրանց շրջանակում կարելի է դիտարկել.

- առողջապահության ոլորտում հանրությանը ծառայություններ մատուցող կազմակերպությունները,
- սպորտի ոլորտում հանրությանը ծառայություններ մատուցող կազմակերպությունները,
- կրթության ոլորտում հանրությանը ծառայություններ մատուցող կազմակերպությունները,
- մշակույթի ոլորտում հանրությանը ծառայություններ մատուցող կազմակերպությունները,
- սոցիալական ապահովության ոլորտում հանրությանը ծառայություններ մատուցող կազմակերպությունները,
- տրանսպորտի և կապի ոլորտում հանրությանը ծառայություններ մատուցող կազմակերպությունները,
- կոմունալ ոլորտում հանրությանը ծառայություններ մատուցող կազմակերպությունները:

Եթե կոռուպցիոն դեպքերն առնչվում են այս կազմակերպությունների գործունեությանը, ապա անձի կողմից տրված տեղեկությունները կհամարվեն ազդարարում, իսկ անձը՝ ազդարար:

[80] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1, ենթակետ 1
[81] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 3

Հավելված 1. Հայտնի ազդարարներ

Էդմունդ Դին Մորել և Սըր Ռոջեր Դեյվիդ Քեյսմենթ

Ռոջեր Դեյվիդ Քեյսմենթը և Էդմունդ Դին Մորելն առաջիններից էին, որ 19-րդ դարի վերջին ահազանգեցին Բելգիայի թագավոր Լեոպոլդ Երկրորդի կողմից Կոնգոյի Ազատ Պետությունում անձնական բիզնես ծավալելու, բնիկ ժողովուրդներին հարստահարելու ու ստրկության ենթարկելու և բնական ռեսուրսները շահագործելու մասին:

Ռոջեր Քեյսմենթը (նկարում՝ ձախից) հետազոտող էր և աշխատում էր արտաքուստ ալտրուիստական նպատակներ, իսկ փաստացի՝ Լեոպոլդ Երկրորդի մասնավոր շահերը հետապնդող Աֆրիկյան միջազգային ասոցիացիայում: Նա մասնակցում էր Կոնգոյում հաղորդակցության ենթակառուցվածքների շինարարության նախապատրաստական աշխատանքներին և տիրապետելով աֆրիկյան որոշ լեզուների, շատ էր շփվում տեղացիների հետ: Նրա զեկույցը Կոնգոյում տիրող ստրկատիրական կարգերի մասին հայտնի է *Քեյսմենթի զեկույց* անվանումով: Հետագայում նա ստանում է դիվանագիտական կոչում և տարիներ շարունակ աշխատում որպես բրիտանացի դիվանագետ: 1900-ականների սկզբին նա ազդարարում է բրիտանական ծագումով՝ Պերուի ամազոնյան ընկերության կողմից հնդկացի ցեղերի շահագործման մասին:

Մորելը (նկարում՝ աջից), հանդիսանում էր Լիվերպուլում գտնվող Էլդեր Դեմփստեր ընդ Քոմփանի կազմակերպությունում որպես կլերկ և, գործի բերումով շփվելով աֆրիկայի գործընկերների հետ, տեղեկացվում էր այնտեղ տիրող դաժանությունների մասին: 1901թ.-ին նա ազատվում է իր կլերկի աշխատանքից և հիմնադրում է African Mail շաբաթաթերթը, որի միջոցով քարոզում է Արևմտյան և Կենտրոնական Աֆրիկայում տեղաբնակների իրավունքների պաշտպանության մասին, ովքեր ենթարկվում էին ծայրաստիճան անմարդկային վերաբերմունքի: Նա գրում է մի շարք գրքեր, հոդվածներ և ունենում ելույթներ, որոնց նպատակն էր աշխարհին ցույց տալ Կոնգոյում տիրող աղետալի վիճակը:

1903թ.-ին Մորելը Ռոջեր Քեյսմենթի հետ համատեղ հիմնում են «Կոնգոյի բարեփոխումների ասոցացիան», որի հիմնական նպատակն էր ցույց տալ Կոնգոյում տիրող իրավիճակը: Մասամբ այս կազմակերպության ջանքերով 1908թ.-ին Լեոպոլդ Երկրորդը Կոնգոն փոխանցեց Բելգիայի տիրապետության տակ և աստիճանաբար սկսեցին բարեփոխումներ անցկացվել:

Մարկ Ֆելտ

Մարկ Ֆելտը 1972-1973թթ.-ին ԱՄՆ Հետաքննությունների դաշնային բյուրոյի պետի տեղակալն էր և հայտնի է Ուոթերգեյթի սկանդալի մանրամասների ազդարարման համար:

Երկրորդ անգամ ընտրված ԱՄՆ 37-րդ նախագահ Ռիչարդ Նիքսոնը ներգրավված էր մրցակից կուսակցության՝ Ուոթերգեյթի գրասենյակային համալիրի դեմոկրատների շտաբում գաղտնալսման սարքերի տեղադրման գործում և փաստորեն իր պաշտոնական դիրքն օգտագործում էր որպեսզի չեզոքացներ իր քաղաքական հակառակորդներին: Հետագայում, նա փորձում էր խոչընդոտել հետաքննության ընթացքին և լրագրողների գործունեությանը:

Մարկ Ֆելտը, որը Սպիտակ տնից ստանում էր ազդակներ՝ կոծկելու տվյալ գործը, «Վաշինգթոն փոստ» թերթի միջոցով «Խորը կոկորդ» (Deep throat) կեղծանվան տակ սկսում է հրապարակել Ուոթերգեյթի մանրամասները:

Ուոթերգեյթի գործի քննությունը բացահայտեց Նիքսոնի վարչախմբի անդամների կողմից պաշտոնական դիրքի մի շարք այլ չարաշահումներ, ինչի արդյունքում ձեռնարկվեց իմպիչմենթի գործընթաց և նախագահ Նիքսոնը ստիպված հրաժարական տվեց:

Ֆրանկ Սեպրիչո



Ֆրանկ Սեպրիչոն Նյու Յորքի պարեկային ոստիկաններից էր, որը 1960-ականների վերջերին սկսեց ազդարարել Նյու Յորքի ոստիկանությունում տեղ գտած հսկայածավալ կոռուպցիայի մասին: Երկար ժամանակ նրա ջանքերն ապարդյուն էին, մինչև որ նրան միացավ մեկ այլ ոստիկան՝ Դեյվիդ Դուրկը և նրանց ազդարարումների արդյունքում երևույթը հանրային մեծ հնչեղություն ստացավ: 1970թ.-ին նա հոդված տպագրեց «Նյու Յորք Թայմս» թերթում, որի արդյունքում Նյու Յորքի քաղաքապետ Ջոն Լինդսիի կողմից կազմավորվեց հանձնաժողով՝ քննելու կոռուպցիան Նյու-Յորքի ոստիկանությունում, որն ավելի ուշ ստացավ «Կնապի հանձնաժողով» անվանումը:

Հանձնաժողովի աշխատանքը հաստատեց Սեպրիչոյի և Դուրկի բացահայտումները: Պատմության մեջ մնաց հանձնաժողովի կողմից կոռումպացված ոստիկաններին պայմանական երկու խմբի բաժանումը՝ «խոտ ուտողների»՝ ովքեր զբաղված էին մանր կոռուպցիայով և «միս ուտողների»՝ ովքեր զբաղվում էին կոռուպցիայի «յուղոտ» պատառներով:

Ջուլիան Ասանժ

Ջուլիան Ասանժն ազդարարման ամենահայտնի համացանցային կայքերից մեկի՝ «Վիքիլիքսի» հիմնադիրն է: Գործարկվելով 2006թ.-ին՝ «Վիքիլիքսը» կարճ ժամանակահատվածում իրար խառնեց աշխարհը ազդարարներից ստացված ցնցող լուրերով՝ մասնավորապես հրապարակելով ԱՄՆ դիվանագիտական կառույցների նյութերը: Դրանք ներառում էին Բաղդադի գնդակոծման ժամանակ ամերիկյան զորքերի կողմից անհամաչափ թիրախավորումները, աֆղանական և իրաքյան պատերազմների ընթացքում ամերիկյան զորքերի ոչ իրավաչափ գործողությունները և այլն: ԱՄՆ նախագահական ընտրությունների քարոզարշավի ընթացքում հրապարակվեցին Դեմոկրատական կուսակցության թեկնածու Հիլարի Քլինթոնի նամակները, որոնք վերջինս ուղարկել և/կամ ստացել էր իր անձնական էլեկտրոնային փոստի միջոցով: Չնայած, որ «Վիքիլիքսի» ազնիվ մղումները կասկածի տակ են առնվում որոշակի անձանց և կառավարությունների կողմից, այնուամենայնիվ, «Վիքիլիքսի» միջոցով հնարավոր դարձավ մի շարք դեպքերի հրապարակայնացումը, որոնք անմիջական սպառնալիք էին ներկայացնում ժողովրդավարական կարգերին:

Հայաստանի քաղաքական անցուդարձը ևս չմնաց անմասն այս հրապարակումներից: «Վիքիլիքսի» շնորհիվ բացահայտվեց, որ 2008թ. Նախագահական ընտրություններից հետո ընդդիմության առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի կապակցությամբ ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանի աշխատակազմից ճնշումներ են գործադրվել Սահմանադրական դատարանի անդամների վրա:

2010թ.-ից Ասանժի հանդեպ սկսվել է հետապնդում Շվեդիայի և ԱՄՆ իշխանությունների կողմից: Շվեդիայի կողմից նա մեղադրվում էր իբր երկու կանանց հանդեպ կատարված

սեռական ոտնձգությունների համար, սակայն այս հետապնդումը փաստացի դադարել է: ԱՄՆ կողմից նա մեղադրվում է լրտեսության մեջ:

2012թ.-ից Ասանժը գտնվում է Մեծ Բրիտանիայում Էկվադորի դեսպանատանը որպես ապաստան հայցող: Թեև նա արդեն իսկ ստացել է Էկվադորի քաղաքացիություն, չի կարողանում լքել դեսպանատունը, քանի որ բրիտանական իշխանությունները գրավի դիմաց ազատ արձակվելու պայմանները չկատարելու համար պատրաստվում են կրկին ձերբակալել նրան:

ՄԱԿ-ի Կամայական ձերբակալությունների աշխատանքային խումբը 2016թ.-ի փետրվարի 5-ին եզրակացրել է, որ Ասանժը 2010թ.-ի դեկտեմբերի 7-ից սկսած բրիտանական և շվեդական իշխանությունների կողմից ենթարկվել է կամայական ձերբակալության: 2018թ.-ի դեկտեմբերի 21-ին նույն խումբը կոչ է արել բրիտանական իշխանություններին թույլ տալ Ասանժին հեռանալ դեսպանատնից և ազատորեն տեղաշարժվել Լոնդոնում:

Ջուլիան Ասանժը հանդիսանում է մի շարք հեղինակավոր մրցանակների դափնեկիր, ինչպես օրինակ The Economist–ի «Նոր մեդիա» մրցանակը (2008թ.), Time ամսագրի բաժանորդների ընտրությամբ ճանաչվել է 2010թ.-ի տարվա մարդ, Մարթա Գելիհոռնի անվան ժուռնալիստիկայի մրցանակը 2011թ.-ին և այլն:

Էդվարդ Սնոուդեն

Էդվարդ Սնոուդենը ԱՄՆ Ազգային անվտանգության ծառայության համար համակարգչային ծառայություններ մատուցող «Բուզ Ալեն Համիլտոն» ընկերության աշխատակիցն էր: 2013թ. նա մեկ միլիոնից ավելի գաղտնի փաստաթղթեր էր ձեռք բերել և դրանց մի մասը հրապարակել միջազգային ճանաչված լրատվամիջոցների միջոցով:

Արտահոսված փաստաթղթերով բացահայտվել է, որ ԱՄՆ Ազգային անվտանգության ծառայությունը, ինչպես նաև բրիտանական, ավստրալիական և կանադական անվտանգության ծառայությունները հսկայաչափ ծավալի տեղեկատվություններ են վերցրել անձանց մասնավոր կյանքի մասին՝ իրականացնելով էլեկտրոնային նամակների, հեռախոսային խոսակցությունների և հաղորդագրությունների գաղտնագրումներ ու գաղտնալսումներ, ապօրինի կերպով հետևելով բազմաթիվ հայտնի և բարձրաստիճան մարդկանց, այդ թվում՝ այլ պետությունների ղեկավարներին, օրինակ՝ Գերմանիա Դաշնային Հանրապետության կանցլեր Անգելա Մերկելին:

Սնոուդենի կողմից տեղեկությունները հրապարակելուց հետո ԱՄՆ կառավարությունը գրեթե անմիջապես անվավեր է հայտարարել նրա անձնագիրը: Հոնկոնգից Մոսկվա ժամանելուց հետո Սնուդենը ստիպված է եղել մնալ Մոսկվայում և 2013թ.-ից ցայսօր Սնոուդենը գտնվում է այնտեղ: 2013թ.-ի հունիսի 14-ին ԱՄՆ իշխանությունները Սնոուդենի դեմ մեղադրանք են առաջադրել լրտեսության և պետական գույքի հափշտակման համար:

2013թ.-ին Թրանսպարենսի Ինթերնեշնլի Գերմանիայի գրասենյակը Միջուկային զենքի դեմ իրավաբանների միջազգային ասոցացիայի գերմանական գրասենյակի և Գերմանացի գիտնականների ֆեդերացիայի հետ համատեղ Սնոուդենին շնորհեցին «Ազդարարի մրցանակ» (Whistleblower Prize), որը տրվում է 2 տարին մեկ անգամ այն մարդկանց, որոնք, հանրային շահից ելնելով, բացահայտում են հասարակությանը, խաղաղությանը, բնությանը կամ առանձին անհատների սպառնացող ապօրինությունները և վտանգավոր զարգացումները:

Աննա Գարրիդո Ռամոս

Աննա Գարրիդո Ռամոսը Իսպանիայի Բոադիլյայի քաղաքապետարանի աշխատակից էր: 2009թ.-ին նա արհմիություններից մեկին տրամադրեց 300 էջից բաղկացած փաստաթուղթ, որը պարունակում էր ապացույցներ քաղաքապետարանում տեղ գտած կոռուպցիայի մասին: Ավելի ուշ այս փաստաթղթի ուսումնասիրությունը վերածվեց «Գուրտելի գործի», որով ապացուցվեց հսկայածավալ «ատկատների» այն պրակտիկան, որում ներգրավված էր այն ժամանակվա իշխող Ժողովրդական կուսակցությունը: Ռամոսի բացահայտումները հանգեցրեցին նրան, որ Մարիանո Ռահոյի գլխավորած Իսպանիայի կառավարությունը 2018թ. հունիսին հրաժարական տվեց:

Չնայած, որ ազդարարման ու բացահայտումների պատճառով Ռամոսի դեմ սկսվեց հետապնդումների մի կատաղի արշավ, նա, այնուամենայնիվ, շարունակեց իր պայքարը: Նա նաև հասավ նրան, որպեսզի Իսպանիայում ընդունվի ազդարարներին պաշտպանող հատուկ օրենք:

2018թ.-ին Աննան ստացել է Թրանսպարենսի Ինթերնեշնլի Օրինավորության մրցանակը:

Հավելված 2. Ձևաթղթեր

ՁԵՎԱԹՂԹԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ

Ստորև նշվող ձևաթղթերը կրում են խորհրդատվական բնույթ:

Պոտենցիալ ազդարարներին առաջարկվում է դիմել փաստաբանի՝ իրավաբանական աջակցություն ստանալու համար:

Բոլոր ձևաթղթերը հասանելի են հետևյալ կայքում՝ https://transparency.am/hy/whistleblowing

Վնասի տեսակ	Ազդարար (Ա)	Փոխկապակցված անձ (ՓԱ)	Սխալմամբ ընկալվող ազդարար (ՍԱ)	Ձևաթղթի համար
Խտրականության կայացած փաստ	Դիմել իրավասու մարմնին կամ նրա լիազորած անձին	Դիմել դատարան	Դիմել իրավասու մարմնին կամ նրա լիազորած անձին	*Ա – Ձևաթուղթ 3* *ՓԱ- Օրենսդրությունը չի նախատեսում հատուկ պաշտպանություն արդեն իսկ կայացված խտրականության դեպքերի համար, եթե այն կիրառվել է Ձեր, որպես փոխկապակցված անձի, դեմ* *ՍԱ – Նույնը ինչ Ա-ի դեպքում*
Խտրականության ռիսկ	Դիմել իրավասու մարմնին կամ նրա լիազորած անձին	Դիմել իրավասու մարմնին կամ նրա լիազորած անձին	Դիմել իրավասու մարմնին կամ նրա լիազորած անձին	*Ա - Ձևաթուղթ 3* *ՓԱ - Նույնը* *ՍԱ - Նույնը*
Խտրականության սպառնալիք	Դիմել իրավասու մարմնին կամ նրա լիազորած անձին	Դիմել իրավասու մարմնին կամ նրա լիազորած անձին	Դիմել իրավասու մարմնին կամ նրա լիազորած անձին	*Ա - Ձևաթուղթ 3* *ՓԱ - Նույնը* *ՍԱ - Նույնը*
Գույքին վնաս հասցնելու կայացած փաստ	Դիմել ՀՀ քննչական կոմիտե	Դիմել ՀՀ քննչական կոմիտե	Դիմել ՀՀ քննչական կոմիտե	*Ա - Ձևաթուղթ 8* *ՓԱ - Նույնը* *ՍԱ – Նույնը*
Գույքին վնաս հասցնելու ռիսկ	Դիմել իրավասու մարմնին կամ նրա լիազորած անձին	Դիմել իրավասու մարմնին կամ նրա լիազորած անձին	Դիմել իրավասու մարմնին կամ նրա լիազորած անձին	*Ա - Ձևաթուղթ 3* *ՓԱ - Ձևաթուղթ 4* *ՍԱ – Նույնը ինչ Ա-ի դեպքում*
Սպառնալիք գույքին վնաս հասցնելու	Դիմել ՀՀ քննչական կոմիտե	Դիմել ՀՀ քննչական կոմիտե	Դիմել ՀՀ քննչական կոմիտե	*Ա - Ձևաթուղթ 5* *ՓԱ - Նույնը* *ՍԱ - Ձևաթուղթ 10*
Կյանքին կամ առողջության	Դիմել ՀՀ քննչական	Դիմել ՀՀ քննչական	Դիմել ՀՀ քննչական	*Ա - Ձևաթուղթ 9* *ՓԱ - Նույնը*

ն արդեն իսկ հասցված վնաս	կոմիտե	կոմիտե	կոմիտե	*ՍԱ – Նույնը*
Կյանքին կամ առողջության վնասելու ռիսկ /առանց սպառնալիքի հնչեցման/	Դիմել իրավասու մարմնին կամ նրա լիազորած անձին, իսկ ռիսկի՝ իրականությանը մոտ լինելու դեպքում, նաև ՀՀ ոստիկանությունն	Դիմել իրավասու մարմնին կամ նրա լիազորած անձին, իսկ ռիսկի իրականությանը մոտ լինելու դեպքում նաև ՀՀ ոստիկանություն	Դիմել իրավասու մարմնին կամ նրա լիազորած անձին, իսկ ռիսկի իրականությանը մոտ լինելու դեպքում նաև ՀՀ ոստիկանությունն	*Ա - Իրավասու անձի կամ նրա լիազորած անձի դեպքում՝ Ձևաթուղթ 3, իսկ իրավասու անձից բացի ոստիկանությանը դիմելու դեպքում՝ Ձևաթուղթ 7* *ՓԱ- Իրավասու անձի կամ նրա լիազորած անձի դեպքում՝ Ձևաթուղթ 4, իսկ իրավասու անձից բացի ոստիկանությանը դիմելու դեպքում՝ Ձևաթուղթ 7* *ՍԱ- Նույնը ինչ Ա-ի դեպքում*
Կյանքի կամ առողջության դեմ սպառնալիք	Դիմել ՀՀ քննչական կոմիտե	Դիմել ՀՀ քննչական կոմիտե	Դիմել ՀՀ քննչական կոմիտե	*Ա - Ձևաթուղթ 5* *ՓԱ - Նույնը* *ՍԱ - Ձևաթուղթ 11*